



ԵՅԳԾ Տեղեկագիր

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագրի եռամսյակային հրատարակություն



№ 4 (9)
2009թ. հոկտեմբեր-դեկտեմբեր



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԵՅԳԾ-ն ԱՄՆ ԱԶԳ կողմից ֆինանսավորված ծրագիր է, որը մեկնարկել է 2004թ. հոկտեմբերին: Ծրագիրը գործում է Հայաստանի 80 համայնքներում եւ նպատակ ունի խթանելու քաղաքացիների մասնակցությունը հանրային հարցերի լուծման գործում: Ծրագրի շրջանակներում համայնքներին տրամադրվում է կազմակերպչական աջակցություն Երիտասարդական գործունեության ակումբներ (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության հանձնաժողովներ (ՀԳՀ) հիմնադրելու համար: ԵՅԳԾ-ն ֆինանսավորում է չի տրամադրում համայնքների կողմից նախաձեռնվող եւ իրականացվող ծրագրերի համար: Սույն տեղեկագրում նկարագրված նախաձեռնությունները կազմակերպվել են համայնքների կողմից եւ ֆինանսավորվել են տեղական տարբեր հովանավորների կամ դոնոր կազմակերպությունների կողմից:

Վերապահում. սույն տեղեկագրի տպագրումը հնարավոր է դարձել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շնորհիվ՝ Կրթության զարգացման ակադեմիայի կողմից իրականացվող Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագրի շրջանակներում: Սույն տեղեկագրի մեջ արտահայտված տեսակետները եւ կարծիքները պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ կառավարության կամ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետները:

Ապարանի ԵԳԱ-ն հյուրընկալեց Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Լ. Յովանովիչին

Հոկտեմբերի 15-ին Ապարանի ԵԳԱ անդամները (Արագածոտնի մարզ) պատիվ ունեցան հյուրընկալելու Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Լ. Յովանովիչին իրենց համայնքի երիտասարդական կենտրոնում: Հանդիպման ընթացքում մասնակիցները ներկայացրեցին նախորդ չորս տարիներին իրականացված առավել կարևոր նախաձեռնություններն ու ծրագրերը: ԵԳԱ անդամները ուրախ էին ընձեռված հնարավորությանը՝ քննարկելու երիտասարդական և համայնքային արդի խնդիրները դեսպան Յովանովիչի հետ: Երիտասարդները խոսեցին նաև համայնքի երիտասարդության կողմից իրականացված հակակոռուպցիոն միջոցառումների մասին: Քըննարկումները ծավալվեցին հակակոռուպցիոն ծրագրերի նպատակների, մեթոդների և արդյունքների շուրջ: Հանդիպումից հետո ԵԳԱ-ն ստացավ

դեսպան Յովանովիչի շնորհակալական նամակը՝ հետաքրքիր հանդիպում և քննարկումներ կազմակերպելու մասին: «Ես ուրախ եմ հանդիպելու Ապարանի ԵԳԱ ակումբի երիտասարդ ակտիվիստներին և ծանոթանալու ԵԳԱ գործունեությանը, որը իրականացվում է ի նպաստ համայնքի

զարգացմանը: Ձեր գործունեությունը ավելի բաց և ժողովրդավարական ապագա ունենալու հույս է ներշնչում»: Դեսպանի այցը ոգևորեց ԵԳԱ անդամներին՝ շարունակելու իրենց ջանքերը համայնքի բարգավաճման, երկրի զարգացման և ժողովրդավարացման գործընթացում:



Ապարանի ԵԳԱ-ն պատիվ ունեցավ հյուրընկալելու Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Լ. Յովանովիչին

Այս համարում նաև

- Տեղեկատվության ազատության մասին իրազեկության բարձրացում Դավթաշեն համայնքում* 2
- Ինտերնետի առկայությունը մոր հնարավորություններ է ստեղծում ԵՅԳԾ համայնքների համար. տեղեկություններ Գեղարքունիք մարզից* 2
- Լուկաշինի ԴԳԴ-ն պաշտպանում է համայնքի ջրօգտագործողների իրավունքները* 2
- Մարտունու ԵԳԱ-ն քայլեր է ձեռնարկում խթանելու տեղական իշխանությունների հաշվետվողականությունը* 3
- ԵՅԳԾ Համայնքային խմբերի քաղաքացիական ակտիվության ուսումնական այց Կրաստան* 3
- Սուրենավան համայնքը քայլեր է ձեռնարկում՝ կանխելու շրջակա միջավայրի ախտուվածությունը* 4
- ԵՅԳԾ համայնքների համագործակցություն. Արագածոտն, Կոտայք և Սյունիք մարզերի ԴԳԴ ԵՆՔահանձնաժողովների գործունեությունը* 4

Սառնակուների ԵԳԱ-ն ստեղծում է «Նորությունների անկյուն»՝ կարևորելով տեղեկատվության ստացման անհրաժեշտությունը

Ինտերնետ կապի տեղադրումը Սառնակուների ԵԳԱ-ի համար նոր զաղափարների և նախաձեռնությունների խթան հանդիսացավ: Սառնակուների ակումբի անդամները որոշեցին համայնքում իրականացնել հետազոտություն՝ պարզելու համայնքի բնակչության շրջանում լրատվամիջոցների հասանելիությունը և տարբեր տարիքային խմբերի պատկանող մոտ 100 բնակիչներ մասնակցեցին նույն ժամանակահատվածում անցկացվող հետազոտությանը, որը տևեց երեք օր: Ըստ հետազոտության արդյունքների՝ բնակչության 32%-ը թերթ չի կարդում անհասանելիության պատճառով, 15%-ը պատիվ դիրքում է, նրանք հետաքրքրված չեն լուրերով,

մնացած 53%-ը ֆինանսական անկայուն վիճակից չեն կարողանում օգտվել թերթերից: Վերլուծության արդյունքերը հուշեցին ԵԳԱ անդամներին, որ ինտերնետի միջոցով ստացված քաղաքական, տնտեսական և մշակութային լուրերը մեծ օգնություն կլինեն իրենց համայնքի համար և ստեղծեցին «Նորությունների անկյուն», որը դարձավ տեղեկատվության ստացման կարևորագույն աղբյուր: ԵԳԱ-ն հրավիրեց համայնքի բոլոր անդամներին կանոնավոր կերպով գալ կենտրոն և ծանոթանալ թարմացվող տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային լուրերին: ԵԳԱ անդամները նաև ինտերնետի միջոցով տպեցին և հա-

մայնքի բնակչությանը բաժանեցին ստացված նորությունները: ԵԳԱ-ն նաև կազմակերպեց հանդիպում ՏԻՄ ներկայացուցիչների հետ և նրանց ծանոթացրեց կայքերից օգտվելու հմտություններին՝ մասնավորապես էլեկտրոնային իրավական տեղեկությունների և համապատասխան մարմիններին դիմելու կարգը սահմանող օրենքների և որոշումների կայքերից օգտվելու հմտություններին: ԵԳԱ-ն կարծում է, որ ինտերնետի առկայությունը, ինչպես նաև ընթացիկ լուրերի և թարմացվող տեղեկատվության ստացումը նոր հնարավորություններ կստեղծեն համայնքային զարգացման համար:

ԵՅԳԾ-ում ընդգրկված համայնքներ

- Ներկայումս հանրապետության տարածքում գործում է Երիտասարդական գործունեության 37 ակումբ եւ Համայնքի գործունեության 43 հանձնաժողով
- Ամենափոքր համայնքը Ձովաշենն է, որն ունի 206 բնակիչ, իսկ ամենամեծը՝ Դիլիջանը՝ 16,202՝ բնակիչ
- Անցած հինգ տարիների ընթացքում ծրագրին մասնակցել է ավելի քան 2,000 կամավոր եւ իրականացվել է ավելի քան 1,700 քաղաքացիական նախաձեռնություն

*2001թ. մարտիամս, <http://www.armsat.am>

Տեղեկատվության ազատության մասին իրազեկության բարձրացում Դավթաշեն համայնքում

Դեկտեմբեր ամսին Դավթաշենի ԵԳԱ-ն «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» (ԻԱԿ) ԶԿ-ի հետ համատեղ կազմակերպել էր սեմինար «Տեղեկատվության ազատության մասին ԶԶ օրենքը» թեմայով, որի նպատակն էր իրազեկել համայնքին տեղեկատվության ստացման իրավունքի վերաբերյալ: Սեմինարին մասնակցում էին ուսուցիչներ, ՏԻՄ ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ, ինչպես նաև ԵԳԱ անդամներ: Մասնակիցները քննարկեցին «Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքը և ստացան իրենց հուզող բազում հարցերի պատասխաններ, որոնք հիմնականում վերաբերում էին տեղեկատվության ստացման իրավունքին: Ինչպես նշեց համադիպման խոսնակը՝ իրազեկվածությունը իրավունքների պաշտպանության առաջին

քայլն է: Մասնակիցները տեղեկատվություն ստացան այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են տեղեկատվության ստացման իրավունքը, ում կարելի է դիմել տեղեկատվություն ստանալու համար, ինչպես պետք է դիմել, որ դեպքերում կարող է մերժվել տեղեկատվության տրամադրումը և ինչ անել, եթե պատասխանը բավարար չէ: Սեմինարի ընթացքում խոսնակը և մասնակիցները օրինակներ բերեցին ընտանեկան աղքատության նպաստի ստացման գործընթացում քաղաքացիների իրավունքների խախտման և հետագայում օրենքին տեղեկացվելու շնորհիվ իրավունքի վերականգնման դեպքերի մասին: Մասնակիցները բազմաթիվ օրինակներ բերեցին, երբ տեղեկատվություն ստանալու



Տեղեկատվության ստացման ազատության վերաբերյալ սեմինար Դավթաշեն համայնքում

իրավունքին տեղյակ չլինելու պատճառով տուժել են: Նրանք պայմանավորվեցին հետագայում շարունակել նման թեմաներով

սեմինարների կազմակերպումը, քանի որ ձեռք բերված գիտելիքները ամենօրյա կյանքում շատ կարևոր են:

Ինտերնետի առկայությունը նոր հնարավորություններ է ստեղծում ԵՅԳԾ համայնքների համար. տեղեկություններ Գեղարքունիք մարզից

ԵՅԳԾ կողմից 80 համայնքներում տրամադրված ինտերնետ կապը ընդլայնեց համայնքների հնարավորությունները օգտվելու այլընտրանքային տեղեկատվամիջոցներից և ծանոթանալու ընթացիկ լուրերին, ինչպես նաև համայնքի զարգացմանը նպաստող բազմաթիվ նոր նախաձեռնությունների խթան հանդիսացավ: Գեղարքունիք մարզի ԵՅԳԾ համայնքները շարունակում են արդյունավետորեն օգտագործել ինտերնետային կայքի ընձեռած հնարավորությունները:

◆ Զեռու գտնվելով մարզկենտրոն Գավառից եւ չունենալով տեղական լրատվամիջոցներ՝ ճամբարակ համայնքի բնակիչները միշտ չէ, որ կարողանում են իրենց մտահոգող խնդիրները ներկայացնել մարզային

իշխանությունների ուշադրությանը: Ինտերնետի առկայությունը նոր հնարավորություններ է ստեղծում ճամբարակի ԶԶԳ-ի համար: Տեղեկանալով, որ դեկտեմբեր ամսին «Զետք» օնլայն պարբերականը կազմակերպում է օնլայն հարցազրույց Գեղարքունիք մարզի մարզպետ Նվեր Պողոսյանի հետ, ԶԶԳ-ն որոշեց իրենց հարցադրումները ուղղել մարզպետին: Զամայնքին հուզող հարցերը հիմնականում վերաբերում էին ճամբարակի ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակին և դրա լուծման հեռանկարներին: Մարզպետը ներկայացրեց նախորդ երկու տարիների ընթացքում մարզում իրականացված ծրագրերը և ավելացրեց, որ 2010 թվականին նոր ծրագրեր են նախատեսվում, եթե միայն ֆինանս

ական հնարավորությունները սալակն դրանք կյանքի կոչել: ԶԶԳ անդամների կարծիքով այս հարցազրույցը բավականին արդյունավետ էր և օգնեց մարզային իշխանությունների ուշադրությունը սևեռել ճամբարակ համայնքի խնդիրների վրա:

◆ Զաշվի առնելով, որ համայնքի երիտասարդությունը մտահոգված է գործազրկության խնդրով, ինչպես նաև դիտարկելով գործազրկության բարձր ցուցանիշը՝ Լճաշենի ԵԳԱ-ն որոշեց օգտագործել ինտերնետային կայքի ընձեռած հնարավորությունները՝ վերոնշյալ խնդիրները հասցեագրելու նպատակով: Նրանք այցելեցին www.job.am, www.ashxatang.am, www.career-center.am էլեկտրոնային կայքերը, գտան աշխատանքի թափուր տեղերի համար հայտարարություններ, տպեցին դրանք եւ բա-

ժանեցին համայնքի բնակչությանը դեկտեմբեր ամսին: Նրանք տեղեկացրեցին համայնքի երիտասարդությանը իրենց և մյուս այլ մարզերում առկա 20 թափուր աշխատատեղերի մասին: Սա միաժամանակ յուրօրինակ փորձ էր երիտասարդությանը ներկայացնելու աշխատաշուկայում առկա պահանջարկը, ինչը կարող է նրանց հետագայում կողմնորոշել: Լճաշենի ԵԳԱ անդամները առաջիկայում նախատեսում են բոլոր ցանկացողների կենսագրական տվյալները տեղադրել համապատասխան կայքերում և ներկայացնել գործատուների ուշադրությանը: ԵԳԱ անդամները նաև նշեցին համապատասխան կայքերի հասցեները, որտեղ երիտասարդները կկարողանան իմքնուրույն աշխատատեղեր որոնել:

Լուկաշինի ԶԶԳ-ն պաշտպանում է համայնքի ջրօգտագործողների իրավունքները

Լուկաշին ԶԶԳ անդամների նախաձեռնությամբ համայնքում կազմակերպվել է իրականացվել է համայնքի ջրօգտագործողների շահերի պաշտպանության ակցիա: ԶԶԳ անդամները համայնքի ջրօգտագործողներից տեղեկացել էին, որ շատ հաճախ իրենց կողմից օգտագործած ջրաքանակը չի համապատասխանում ոռոգման ջուր տրամադրող կազմակերպության գրանցամատյանների տվյալների հետ, այսինքն բնակիչները պետք է վճարեն ավելին, քան իրականում օգ-

տագործել են: ԶԶԳ-ն կազմակերպել է առկա կտրոնների հավաքման, գրանցման և ջրամատակարարի գրանցամատյանի հետ համեմատման գործընթացը: Դրա արդյունքում պարզվել է, որ ջրամատակարարի կողմից ջրօգտագործողներից պահանջվող վճարման գումարները զգալիորեն տարբերվում են ջրօգտագործողների իրականում օգտագործած ջրաքանակի գումարներից: ԶԶԳ անդամները անդամները հանդիպել են մարզային փաստաբանական

գրասենյակի աշխատակիցների հետ, որպեսզի համապատասխան տեղեկատվություն ստանան և ի վիճակի լինեն դատական հայց ներկայացնել ջրամատակարար կազմակերպության դեմ: Նոյեմբերի 15-ին նրանք նաև կազմակերպեցին սեմինար՝ նվիրված դատարան դիմելու ընթացակարգին: ԶԶԳ-ի կողմից իրավիճակը իրավաբանը համայնքի բնակիչներին ներկայացրեց ԶԶ դատական համակարգը, դատարան դիմելու մեխանիզմները և ընթացակարգը: ԶԶԳ-ն մտադիր է

շարունակել ջրօգտագործողների իրավունքների պաշտպանության գործընթացը և հունվար ամսին պլանավորում է հայց ներկայացնել ջրամատակարար կազմակերպության դեմ:



Մարտունու ԵԳԱ-ն քայլեր է ձեռնարկում խթանելու տեղական իշխանությունների հաշվետվողականությունը

Դեկտեմբերի 5-ին Մարտունու ԵԳԱ անդամները կազմակերպեցին հանդիպում համայնքի ղեկավար Վահրամ Յովհաննիսյանի հետ՝ քննարկելու համայնքին հուզող որոշ հարցեր, ինչպես նաև ներկայացնելու ՏԻՄ դերն ու պարտականությունները: Գյուղապետը ներկայացրեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, համայնքային բյուջեի նախագծման գործընթացը, նախատեսված ծախսերը և համայնքի դերը՝ բյուջեի պատրաստման և հաստատման գործում: Երիտասարդները բազմաթիվ հարցեր տվեցին համայնքային բյուջեի կազմման, հարկահավաքման գործընթացի, ինչպես նաև հաջորդ տարվա համար նախատեսված ծրագրերի վերա-

բերյալ: Քանի որ համայնքային բյուջեն կազմվում և հաստատվում է տարվա վերջում, երիտասարդները առաջարկեցին, որպեսզի գյուղապետը որոշակի ծախսեր նախատեսի՝ իրենց առօրյա և մշակութային կյանքը ավելի հետաքրքիր և բովանդակալից դարձնելու համար: Գյուղապետը խոստացավ ի նկատի ունենալ նրանց առաջարկությունները և ներկայացնել ավագանու քննարկմանը: ԵԳԱ-ի կարծիքով այսպիսի նախաձեռնությունները նպաստում են ՏԻՄ գործունեության բա-
 փանցիկությանը և հաշվետվողականությանը, ինչպես նաև երիտասարդներին որոշումների կայացման գործընթացում ներգրավմանը:



ԵԳԱ նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպում համայնքի երիտասարդների և գյուղապետի մասնակցությամբ

ԵՀԳԾ Համայնքային խմբերի քաղաքացիական ակտիվության ուսումնական այց Վրաստան

Հոկտեմբեր ամսին 21 ԵԳԱ/ՀԳՀ ներկայացուցիչներ մեկշաբաթյա ուսումնական այցով մեկնեցին Վրաստան: Ուսումնական այցի նպատակներն էին.
 - Օգնել ԵԳԱ/ՀԳՀ ներկայացուցիչներին ձեռք բերել գիտելիքներ և հմտություններ համայնքային և երիտասարդական ծրագրերում քաղաքացիական մասնակցության գործընթացի, համայնքային ակտիվության և մոբիլիզացման, ՏԻՄ-ի հետ համագործակցության մեթոդների և ֆինանսավորման հնարավորությունների վերաբերյալ
 - Խրախուսել մասնակիցներին դառնալ ավելի ակտիվ իրենց համայնքներում՝ կիսելով քաղաքացիական և երիտասարդական ակտիվության իրենց փորձը և աջակցելով նոր գաղափարներին
 - Աջակցել մասնակիցներին ստեղծելու կապեր Վրաստանի քաղաքացիական հասարակու-

թյան և երիտասարդական կազմակերպությունների հետ և գտնելու նոր գործընկերներ հետագա համատեղ ծրագրերի իրականացման համար:
 «Սիվիտաս Տերոջիկա» ՀԿ-ի կողմից անցկացված այս ուսումնական այցի ընթացքում շեշտը դրվում էր պրակտիկ հմտությունների եւ կիրառելի գիտելիքների վրա: Ուսումնական ծրագիրը ներառեց էր բազմաթիվ այցեր և հանդիպումներ Թբիլիսիում, Լազոդեխիում, Ռուսթավիում, Թբիլիսիում, Քութայիսիում, Օզուրգեթիում և Խաշուրիում գործող պետական մարմինների, քաղաքացիական հասարակության հարցերով զբաղվող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ: Ուսումնական այցի շրջանակներում քննարկվել են հետևյալ թեմաները.
 - Երիտասարդական և քաղաքացիական հասարակության նախաձեռնությունների ֆինանսա-

կան հնարավորություններ
 - Տեղական համայնքների սոցիալական և տնտեսական իրավունքների պաշտպանություն
 - Վրաստանի կառավարության երիտասարդական ծրագրեր
 - քաղաքացիական մասնակցություն, համագործակցություն տեղական իշխանությունների հետ
 - համագործակցություն պետական, մասնավոր և հասարակական ոլորտների միջև
 - տեղական ժողովրդավարություն
 - ինտերնետի օգտագործում նորություններին և համայնքային զարգացման մասին տեղեկատվությանը ծանոթանալու նպատակով
 - երիտասարդական համայնքային կենտրոններ գյուղական համայնքներում
 - երիտասարդների մասնակցություն համայնքի զարգացման պլանավորման գործում
 - բանավեճերի կազմակերպում
 - համայնքային զարգացման և ինտեգրացիայի կենտրոնների դերը
 - համայնքային կազմակերպվածություն արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում
 Ուսումնական այցի զնախատման էլ հետագա գործունեության պլանավորման ժամանակ մասնակիցները նշել են, որ իրենց համայնքներում նախատեսում են իրականացնել հետևյալը.
 - Բարելավել տեխնիկական ենթակառուցվածքները գյուղերում՝ մասնավորապես ժամանցի համար նախատեսված տարածքի կառուցում (այգի, սպորտային հրապարակ, հասարակական վայրերում աղբամանների տեղադրում)
 - համատեղ կազմակերպել երիտասարդական ճամբար (շըր-

ջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ) Վրաստանի և Հայաստանի երիտասարդության համար, որտեղ երիտասարդները կծանոթանան կովկասյան տարածաշրջանի շրջակա միջավայրի ընդհանուր խնդիրներին
 - կազմակերպել բանավեճային մրցույթներ դպրոցներում և բուհերում
 - ՏԻՄ-ի օգնությամբ հիմնադրել նախակրթարաններ այն համայնքներում, որտեղ չկան պետական մանկապարտեզներ կազմակերպել երիտասարդների փոխանակման ծրագրեր Հայաստանի և Վրաստանի միջև
 - արդյունավետորեն օգտագործել ինտերնետային ռեսուրսները՝ աջակցելու համայնքային և երիտասարդական ծրագրերին
 - կազմակերպել հանդիպումներ և քննարկել ուսումնական այցի ժամանակ ստացված գիտելիքներն ու տեղեկատվությունը
 - ամրապնդել ՀԿ-ների, լրատվամիջոցների և հասարակական քաղաքացիական այլ կազմակերպությունների հետ ունեցած կապերը և համագործակցությունը
 - կազմակերպել Վրաստանի կառավարության կողմից կազմակերպված «Պատրիոտ» ճամբարի նման երիտասարդական ճամբարներ
 - տեղական իշխանությունների հետ հաստատել ավելի արդյունավետ հարաբերություններ
 - կազմակերպել տաղանդավոր երեխաների նկարների ցուցահանդես-վաճառք, որից օգուցած շահույթը կօգտագործվի հաշմանդան երեխաներին օգնելու համար:



Վրաստանում տեղի ունեցած ուսումնական այցի մասնակիցները հանդիպումներից մեկի ժամանակ



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

Կրթությամբ զարգացման ակադեմիա
Այգեժոր 10,
0019 Երևան
Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ (374 10) 225 636
Ֆաքս՝ (374 10) 275 686
Էլ փոստ՝ ycap@aed.am

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագիր



Academy for Educational Development

Մեր ուսուցիչներն են՝
<http://ycap.am>
<http://aed.am>

Սուրենավան համայնքը քայլեր է ձեռնարկում կանխելու շրջակա միջավայրի ախտոտվածությունը

Սուրենավանի ԵԳԱ-ն նախաձեռնել էր ստորագրահավաք, որը վերաբերում էր ցեմենտի գործարանի կողմից շրջակա միջավայրի աղտոտմանը: Մինչ նույններ ամիսը ԵԳԱ անդամները հավաքել էին 600 ստորագրություն և նամակի հետ հանձնել Ազգային ժողովի պատգամավոր Լարիսա Ալավերդյանին: ԵԳԱ անդամները քննարկել են նաև այն փաստը, որ հարևան

համայնքները ևս ներկայացրել էին այս խնդրի վերաբերյալ նամակներ: Ազգային ժողովի պատգամավորը խոստացավ հարցին լուծում տալ, քանի որ ցեմենտի գործարանի վնասակար ազդեցությունը վտանգավոր է ոչ միայն Սուրենավան համայնքի, այլև բոլոր հարևան համայնքների ու քաղաքների բնակիչների համար:



Ստորագրահավաք՝ նվիրված Սուրենավան համայնքի շրջակա միջավայրի խնդիրներին

ԵԳՉԾ-ն ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված ծրագիր է, որն իրականացվում է Կրթությամբ զարգացման ակադեմիայի (ԿԶԱ) կողմից:

ԵԳՉԾ հիմնական նպատակն է ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր համայնքում սերմանել անհատի կամ անձանց խմբի՝ որպես հանրային շահերի պաշտպան ծառայելու գաղափարը եւ դրա կարելությունը:

Ծրագրի երեք հիմնական բաղադրիչներն են.

1. Ստեղծել մեխանիզմներ, որոնց միջոցով կխթանվի երիտասարդների եւ համայնքների այլ անդամների մասնակցությունն իրենց համայնքներում հանրային հարցերի լուծման գործընթացին՝ աջակցելով համայնքներում երիտասարդության, համայնքային եւ հանրային խնդիրների լուծմանը զբաղվող երիտասարդական գործունեության ակունքների (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության հանձնաժողովների (ՀԳՀ) հիմնադրմանը:
2. Ավելացնել երիտասարդների եւ համայնքների այլ անդամների՝ քաղաքացիական ակտիվության բարձրացման եւ հանրային հարցերի լուծման գործընթացում ավելի ակտիվ մասնակցելու համար անհրաժեշտ գիտելիքները/հմտությունները՝ երիտասարդներին եւ համայնքի այլ անդամներին տրամադրելով հնարավորություններ, որոնք կօգնեն բարձրացնել նրանց իրազեկությունը, հարստացնել գիտելիքները եւ զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են երիտասարդությանը, համայնքի այլ անդամներին եւ հանրությանը հուզող խնդիրները հաջողությամբ լուծելու համար:
3. ԵԳԱ/ՀԳՀ-ներն իրականացնեն ծրագրեր, որոնք կբարձրացնեն քաղաքացիական ակտիվությունը եւ մասնակցությունը, կբխեն հանրության եւ համայնքի շահերից, կնպաստեն համայնքներում հանրային հարցերի լուծման գործում սխտեմատիկ բարեփոխումների իրականացմանը եւ կխթանեն համայնքի կարիքների լուծման համար ավելի կայուն մոտեցումների որդեգրումը:

ԵԳՉԾ համայնքների համագործակցություն. Արագածոտն, Կոտայք և Սյունիք մարզերի ՀՀՍ ենթահանձնաժողովների գործունեությունը

ԵԳՉԾ համայնքային համագործակցության նախաձեռնության շրջանակներում բոլոր տասը մարզերի ՀՀՍ ենթահանձնաժողովները ակտիվորեն ներգրավված են եղել համայնքային և մարզային մակարդակներում առկա խնդիրների լուծման նպատակով տարբեր նախաձեռնությունների պլանավորման և իրականացման գործում:

◆Յոկոտեմբեր ամսին Արագածոտն մարզի ՀՀՍ ենթահանձնաժողովը նախաձեռնել էր հանդիպում Սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարարի հետ՝ քննարկելու համայնքներում երիտասարդության առկա հիմնախնդիրները: Ենթահանձնաժողովի անդամները նշեցին, որ մարզերի երիտասարդությունը ավելի հաճախ է բախվում խնդիրների հետ, քան երևանի երիտասարդությունը, և այդ պատճառով էլ հատուկ ուշադրության կարիք ունի: Փոխնախարարը ողջունեց ենթահանձնաժողովի անդամների ցանկությունը հասցեագրելու երիտասարդության հիմնախնդիրները և խոստացավ մոտ ապագայում այցելել համայնքներ և ուսումնասիրել առկա խնդիրները, որպեսզի համատեղ քննարկումների արդյունքում գտնեն դրանց հնարավոր լուծումները և ներկայացնեն ինչպես երկրի երիտասարդական քաղաքականության մեջ, այնպես էլ ապագա ծրագրերում: Որպես առաջին քայլ նույններ ամսին Արագածոտն մարզի ՀՀՍ հանձնաժողովը նամակ հղեց փոխնախարարին՝ թվարկելով ԵԳՉԾ բոլոր ութ համայնքներում առկա երիտասարդության հիմնախնդիրները և վերահաստատելով համագործակցելու իրենց ցանկությունը:

◆Կոտայքի մարզի ՀՀՍ տարածքային ենթահանձնաժողովը խնդրել էր մարզի բոլոր ութ ԵԳՉԾ համայնքների ղեկավարներին համայնքներում տեղադրել տեղեկատվության և հայտարարությունների ցուցանակներ, որպեսզի բնակիչները տեղեկանան համայնքային անցուդարձին, ներառվեն տեղական իշխանությունների որոշումների կայացման, համայնքային բյուջեի և քառամյա զարգացման ծրագրերի ձևավորման գործընթացում: Այս նախաձեռնության արդյունքում Խնձաձախ, Գորայք և Վերին Խոտանան համայնքներում տեղադրվել են նշված ցուցանակները: Ենթահանձնաժողովի անդամները շարունակում են աշխատել մյուս հինգ համայնքների ղեկավարների հետ՝ ցուցանակների տեղադրման գործընթացը արագացնելու նպատակով:

◆Կոտայքի մարզի ՀՀՍ ենթա-